

տեսութենէն վերջ մեր մտածումը կը գրաւուի տեւի ճարցումով մը. հոգեկան բնէջ պահանջներ զուսցնելու համար գրուած են այս շքերթուածները, վասնզի այս հատորը բազկասնող եւութիւնը ժամանակին մեծ յաջողութեամբ տուած են Սիամանթոն և Վարուժան. վաղապաթներու հեղինակին քով վերոյիշեալներու բացասական գիծերը մտահոգիչ ըլլալու չափ կը թանձրանան, շատ բան խելով իր գոյութեան իրաւունքէն:

Վաղապաթներու հեղինակը այս բոլոր թերութիւններով հանդերձ կը զատուի սակայն մեր բանաստեղծներու թշուառ խմբակէն, որոնք զուրկ իրական տեսիլներէ և ապրումներէ, կը յամանտին արուեստի համբուն մէջ ուխտագնացի մը մոլեւանդութեամբ մը Վաղապաթներու հեղինակը սեփական առաջինութիւններ՝ զորս մեր յետպատերազմեան զբոսներէն շատ քիչը ունին. փոստեան ըստ ընդ, և ինչքանայազատութիւններու իր մթերքը զուրկ է կասկածէ, զատուակ անոր որ զատուակն ժպտկոյթէ մը հուշայ՝ (յմուռնալ որ մխիթարեան զոլորոցի վերջաւոր մէջ բանաստեղծն է ան), արդի լինչտ մը կայ իր գործին մէջ, որ թէև չի նոյնանար մեր նորագոյն շքերթուածներէն նորոտաց նկարագիրներուն, (Ջարեան, Թօփալեան և այլն) բայց որ մեզի չի նեղեր, թերևս այն հանգամանքով որ այդ գործի ընդմէջէն երկու մտայնութիւններն ալ զգալի են: Այս հանգամանքը պիտի բաւէր զինք սիրելի ընելու համար:

Գալով իր Եփրատի սիւքերուն, և Երբոյ երգերուն, որոնք հասորին վերջին, և ամենէն անուշ մասը կը կազմեն, հակառակ իրենց զեզեցիկ պատկերներուն, և զգայուն ու յաղոյ առաջներուն, ինչ կրցած ըլլալ ժողովուրդի շունչով և զեղեցեղութեամբ երգին. ժողովրդային մոթիփներով շքերթուած չի ելելու գործը միշտ մատուցութեան զատուարտուած է, վասնզի զայն վերջուտին ստեղծելու աշխատանքը՝ որքան ալ հարատարուէ կատարուի՝ կը Քասեօ անոնց ինքնատարտուի արուեստին: Իրականաբար աւելի յաշնալութեամբ օգտագործած են այդ մոթիփները, որոնք իրենց նախնական տարազին մէջ շատ անշատ ջանի մը սիրտէ փրթած տողերու մէջ կը ծագակն, բարեւոյ համար իրենց զեղեցեղութիւնն ու ոլորդ և մաքուր շունչը:

Վաղապաթներու հեղինակը զանոնք իր արուեստին կ'ենթարկէ կազալով երկու եղբերուն վրայ:

Երբ կ'աւարտեմ բացասական կողմերով եւ նայն ատեն առաջինութիւններով հարուստ Վաղապաթներու զէզը, լին միտեր ինչո՞ւ մնազոց զբի յորհրդաւոր մէկ տեսիլը կը գծուի ծանուած միտ մէջ. կ'ակնարկեմ այն էջին, ուր Տիբրոյ հրեշտակը կը սակարկէ Արքանալի հետ աշխարհամասի մը կործանման և փրկութեան համար. և յայտնի է մեզի թէ հինգ արդարներ իոկ չլստուեցան եւ քաղաքը ծծմբակէզ կործանեցան: Սակայն հինգէ աւելի արդարներ միշտ պիտի կրնան երաշխաւորել Վաղապաթներու արժէքը, փրկելով զայն մոխրանալու սպառնալիքէն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼԵՁՈՒԻ

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ

Այլ որ գիտեմնաս որ յառաջ քան զամենայն ստածումն գիւհանդի ուժն և զտարիքն և զկերպն և զերկիրն ու ժամ, տես թէ օգնէ տարիքն, և այն զոր ասացաք, դու երակ առ սկիզբն այս ջերմանս, յառաջ քան որ յաւելնայ հիւանդութիւն. ապա թէ շօզնէ ուժն և տարիքն և այլն, դու ապիկիք արկ, և արիւն հան. զի ըսկիզբն այս ջերմանտ արիւն հանելն շատ օգտակար է: Այլ ի յաւելնան և ի կատարելն հիւանդութեան, որ է երրորդ ժամանակն, պատրաստ՝ որ չառնուս երակ, զի չէ ժամանակն և ոչ պատեհ, այլ սկիզբն հիւանդութեան առ զերակն: Զի մեծ իմաստասէրն Գալիլեոսն պատրաստեցաւ շատ, եւ ես տեսայ ի յիմ ժամանակ, որ ի կատարել ժամն հիւանդութեան երակն առին, և մեռան շատք, և այլ տեսայ, որ ապիկիք արկ, նա հիւանդն վատուծ էր, մեռու: Չէ պատեհ՝ յորժամ հիւանդն վատուծ լինի, արիւն հանել, թէպէտ և տարիքն և ժամն օգն լինին: Բայց երբ ուժն օգնական լինի, և ժամն չլինի, կարողք ենք ճար այրնելն և երակ առնուլն, և այն որ տարիքն շօզնն, կարող ենք ճար այրնել ապիկիք արիւն հանելով ի սկիզբն հիւանդութեան, որ գերածանի հիւանդնն:»

Մխիթար Հեռացի, էջ 65-66, 1184 թ.

3. «Վաղապա յարուկնայ ամուսնութեան. Լրամայէ աստուածային օրէնք» որ այրն գլուխ է կնոջն և պատեհ է որ կինն հայնց կենայ ի յարկանն ի համանքն՝ զէզ յոքն ու այլ զօգուածքն ի գլխոյն: Ապա թէ ուրիշ որ վասն անհնապանդ լինելոյ կնկանն անհնազատութիւն կենայ յիրենց մէջն, նա կու տայ համանք օրէնք որ բաժնին, երբ այլ ճարակ չկենայ և տայ արկին զինչ կետ իր առել լինի ի յինք, որ երթայ այրիկ մի այլ առնու: Զի թէպէտ և յառջի կու նոնքն չկայր այս որ կարէ վասն անհանազատութեան թողուլ, բայց յետև վասն անհնազատութեան, որ տեսն որ այլ մեծ վզեհ

կայր ի ծայրն, նա զայս թուլցուցին: Բայց երկու դեհին հալվին որ ի խարճն զնաց, և պառիկելիք որ երկուքն մաշեցին՝ վճար չկայ, ապա անուռն զինչ որ լինի գուռեքն դառնայ, և աճն ի կէս լինի ու վասն արծեւոյ կամ ստածեւոյ կամ վասն այլ իրաց՝ վարձ կամ այլ աւելի պակաս չկայ: Այս է զոր գրեցաւ:»

Ամբաս Գասասանագիրի հրա. Քարս. էջ 107

4. (Առևտրական հրովարտակ որ մեր Լեոն Գ. թագաւորը շնորհել է Ջենովացի վաճառականներին՝ 1288 թուին: Մագաթեայ բնագիրը պահուում է Տուրինոյի գիւսնուսի և նմանահանուած է Արսուան, էջ 387):

«Այս մեր թագաւորական բարձր հրամանք է և հաստատութեան սիգիլ Լեոնի ճշմարիտ ծառայի Աստուծոյ և նորին շնորհօք և ողորմութեամբ թագաւորի ամենայն հայաց, զոր պարգևեցաք աստուածայնաստ գունձին ճնշիլզացն, ի խնդրոյ պատուելի և իմաստուն իշխանին մեծապատուեալ վիզայրին ճնուվիզացն գունձին ծովու այս դեհին և մեր թագաւորութեանս կատարել և հաւատարիմ սիրելոյն սիր Պէնէթ Ջաքարէլին: Վասն ճնուվէջ վաճարկներոյն, որ լինի իրենց սահմանն այսպէս. յառաջ որ մեր քաղքնոյն որ ի մեր ձեռք կան՝ նա բաժերն ու իրաւներն լինի որպէս Այասուն է, զարդել ի յայն տեղեւտընոյն՝ որ ի սիզեղն գրած կայ, և զինչ խակ իրք ծախեն ի շուկայն սամրով ու ի տունն ծախեն՝ նա քանց զսամրչէքն այլ իրք չտան. և զինի թէ պըտթէով ծախեն ու թէ փարչով, նոյնպէս ու ձէթ թէ պըտթէով ու թէ ճառաով՝ որ անկիւղու ծախվի՝ նա իրաւունք չտան քանց սամրչէքն ի պըթէն նոր գրամ մէկ: . . . և վանց վաճարկներոյն, որ եփ կու գան՝ նա զիրենց սնդիկներն կու բանան ու զիրենց իրքն ի գիր կու առնուն, նա չբանան զիրենց սնդիկներն ու ոչ մատնէրէն ու ոչ գրեհ զիրենց իրքն: . . .»

Լեոն թԱԳԱՒՈՐ ԱՅՈՑ

Այստեղ անհրաժեշտ է անել հետեւեալ նկատողութիւնը:

Մենք եթէ վերը, գլուխ ժԸ մերծեցինք՝ հայերէն բարբառների գոյութիւնը Ե. դարում, նոյնը անշուշտ չենք կարող անել ա-

ւելի ուշ, յատկապէս ԺԱ-ԺԲ դարերի համար: Այս ժամանակ արդէն կազմուած էին Հայաստանում և Հայաստանից գուր գաղթաւորներում զանազան բարբառներ, իւրաքանչիւր կամ պակաս մեծ տարբերութեամբ: Միջին հայերէնն էլ ուրեմն մի բարբառ չէր, այլ ունէր իր զանազան ձեւերը, ինչպէս հին բարձր գերմաներէնը կամ միջին բարձր գերմաներէնը: Այս զանազան ձեւերը ընդհանրապէս մեզ յայտնի չեն. կայ նրանցից միայն մէկը, այն է Կիլիկիայի բարբառը, որ թէ և գաղթաւորի մի բարբառ, բայց պետականութեան շնորհիւ ստացաւ աւելի պատուաւոր դիրք և անցաւ գրականութեան: Վերև յիշատակուած գործերը առհասարակ Կիլիկիոյ բարբառով են զբրուած: Այս բարբառը կամ լեզուն է՝ որ պիտի կոչենք այսուհետև Կիլիկեան հայերէն և որ միջին հայերէնի ճիւղերից մէկն է միայն: Այժմ անցնինք նկարագրելու միջին հայերէն լեզուի քերականական յորինուածութիւնը և ցոյց տալ նրա հիմնական տարբերութիւնները մի կողմից հին գրաբարից և միւս կողմից արդի աշխարհաբարից: Այս նիւթով առանձնապէս զբաղուել է գերմանացի հայագէտ Փարստ, որ կազմել է միջին հայերէնի Կիլիկեան ճիւղի մանրամասն ու մանրակրկիտ քերականութիւնը (Հիսթորիք գրամմատիկ դես Կիլիկիա Արմենիորն, Ստրասբուրգ 1901, մասամբ թարգմանուած հայերէն և հրատարակուած Բազմաժգէպի մէջ, 1900 թ. յետոյ ընդհատուած):

Բնականաբար մենք ուրիշ բան չենք կարող անել այստեղ, եթէ ոչ համառօտել այդ աշխատութիւնը և ապա նրա ընդհանուր գծերը, այնքան որքան թոյլ են ստիլս Հայց լեզուի պատմութեան անձուկ սահմանները:

Կիլիկեան հայերէնը բնականաբար գործ է ածուս այն այրուբերք՝ որ աւանդուած էր Միսրոպից. բայց տառերի հնչումը, ուրիշ խօսքով ընթիցցանութիւնը այլ եւս այն չէր, ինչ որ Միսրոպի ժամանակ: Ամէն լեզուի մէջ էլ սովորական երևոյթ է այս: Լեզուի ձայները մշտական փոփոխութեան մէջ են: Բայց գրութիւնը՝ իրրև քարացած մի մարմին, մնում է ձևով անփոփոխ, իսկ ձայնապէս՝ հետեւելով լեզուի դարձ գար յաջորդական փոփոխութեանց, ստանում է շարունակ նորանոր հնչումներ: Այսպէս օրբ-

նակ որք բառը՝ որ Ե. գարուս հնչուում էր որք (orb), իրապէս էլ գրուում էր որք, որով գրութիւն և հնչում համապատասխանում էին իրար: Ժամանակ անցնելով այդ բառը սկսեց հնչուել ուորք (uorb), բայց գրութիւնը մնաց պարզեղ որք և միայն հնարուեց մի կանոն՝ թէ ու տառը բառի սկզբում կարգացւում է ու: Այնուհետև բառը սկսեց հնչուել վորք, բայց գրութիւնը մնաց գար-ձեալ նոյնը և հնարուեցին նոր կանոններ, թէ ու տառը բառի սկզբում կարգացւում է վօ և ք տառը Ի-ից յետոյ կարգացւում է փ: Այսպէս հասկանալ և այն բոլոր պարագաների համար, երբ գրութեան և հնչման մէջ որեւէ տարբերութիւն կայ:

Համաձայն այս ընդհանուր օրէնքի՝ կիրիկեան հայերէնն էլ ըստ կարելոյն անփոփոխ պահելով մետրորեան գրութեան ձեւը, ստիտ էր նրան նոր արժէքներ, համաձայն իր նոր հնչումին:

Այսպէս Ե տառը հնչուում էր շեշտի տակ ie, շեշտից առաջ e, ինչպէս րնկեր՝ օngier, մեռնիմ՝ mernim:

ո տառը բառասկզբում հնչուում էր ոօ, իսկ բառամէջում իրր փակ օ՝, որ մօտե-նում էր ու հնչման:

այ թէ բառավերջում և թէ բառամիջում հնչուում էր ա:

ոյ բառավերջում հնչուում էր օ, բառի մէջ ձայնաւորից առաջ հնչուում էր ույ, իսկ բաղաձայնից առաջ հնչուում էր ու-ի մօտիկ ւ հնչումով:

իւ բառավերջում, ինչպէս նաև բառի մէջ ձայնաւորից առաջ հնչուում էր iv, իսկ բաղաձայնից առաջ ü. զրա համար էլ յա-ձարի միւլենոյն բառը գրուում է մերթ իւ և մերթ ոյ տառերով:

եւ հնչուում էր ev կամ iev, ինչպէս որ աւ ձայնաւորից առաջ և բառավերջում հնչուում էր ալ:

ու բաղաձայնից առաջ և բառավերջում ունէր բաց ու (u) հնչումը, իսկ ձայնաւորից առաջ հնչուում էր արդէն իրր բաղա-ձայն վ. բացառութեամբ քողովի ևն ձեւով անկատարների, ուր ունէր նոյնպէս ու հնչումը:

Բաղաձայնները ենթարկուել են ձայնա-չրջութեան օրէնքին. ա, կ, օ, ծ, ց հընչ-ւում էին իրրև թրթռուծ b, g, d, j, յ, իսկ ք, գ, դ, ձ, ջ հնչուում էին իրրև խուլ p, k,

t, c, ք. այս ձայնաչրջութեան չէին ենթար-կուած us, es, սպ, սպ, ոկ, սկ խմբերը՝ որոնք կին հնչման համեմատ կարգացւում էին st, sht, sp, shp, sk, shk և ո՛չ թէ sd ևն. նոյնպէս նգ, նբ, նդ, նյ, նյ՝ և ո՛չ թէ nk, np, ևն. սրտ համար էլ անխտր գրուում էին վերի ձեւերով և կամ նկ, նպ, նց, նծ, նն, ննյ բոլորը վերածելով մի յիշուարանական ֆոր-մուլայի՝ կարող ենք ասել թէ խուլները գար-ձեւ էին թրթռուծ, և թրթռուծները՝ խուլ, միայն անզականից յետոյ մնում էին անփո-փոխ: Ետտ անզամ կ տառը հնչուում էր պարձեալ կին ձեւով k, իրր համապատասխան արտաբերէն Յ = q տառին:

Միւս բաղաձայններից դ արդէն ունէր կոկորպական ղ հնչումը և յ բառասկզբում կարգացւում էր հ:

Կիրիկեան հայերէնը ստեղծել էր նաև երկու նոր ձայն, մի ձայնաւոր և մի բա-ղաձայն, որոնք չկային մետրոպեան շրջա-նում և հետեւաբար մետրոպեան այրուբնի մէջ առանձին նշան չուէին: — Սրանք էին օ և ֆ տառերը՝ որ յուներէն այրուբնից առին:

Այս օ տառի համար զանազան սխալ կարծիքներ կան. կարծում են թէ մետրո-պեան շրջանին օ հնչումը գրուում էր աւ, որ կիրիկեան շրջանումն էլ շարունակուում էր և յետոյ դիրբութեան համար ստեղծ-ուեց օ տառը: Եթէ մետրոպեան շրջանին օ ձայնը գրուում էր աւ, հապա ինչու՞ համար էր հնարուած ո տառը: Երբ համեմատում ենք Մետրոպեան շրջանում կատարուած բաղամթիւ յունական փոխառութիւնների հայերէն տառադարձութիւնը յունականի մայր ձեկ հետ, տեսնում ենք որ յունարէն օ-ի դէմ հայերէն գրուել է միշտ ո. այսպէս օրինակ որդոս — յն. ὄρθος, որթողոս — յն. ὄρθωτος, պողիպոպ — յն. πογγιπος ևն ևն: Ընդհակառակը հայերէն աւ գրութեան դէմ գտնում ենք յն. աւ, ինչպէս ալգոսոս — աւ-γουσσος, Պաւղոս — Παύλος ևն: Առաջին հա-մեմատութիւններից հետեւում է որ ո տառը հնչուում էր մեր այսօրուայ օ-ի պէս կամ որ նոյն է՝ օ հնչումը գրուում էր ո: Երկրորդ համեմատութիւններից երեւում է որ աւ հնչում էր յն. աւ ձեկ նման և որովհետև յունարէն աւ յունէր օ հնչումը, ուստի և աւ չէր հնչուում իրր օ: Միւլենոյն ժամանակ

կարելի չէ ասել որ աւ հնչւում էր այսօր-
 ուայ պէս ավ, որովհետեւ այդ պարագային
 ի՛նչ պատճառ կար որ ավ չգրէին, այլ զը-
 րէին աւ: Իրապէս աւ հնչւում էր հին լա-
 տինականն աւ կամ արդի գերմանականն աւ
 երկբարբառի նման, որ արագ արտասան-
 ուած աւռ ձևի հնչիւնն է ներկայացնում: Ժ-
 ամանակ անցնելուց յետոյ՝ ու է աւ փո-
 խեցին իրենց հնչւումը, մանաւանդ այս վեր-
 ջիւնը: Կիրիկեան շրջանում ու ունէր փակ օ
 (կամ ու-ի մերձաւոր) հնչիւնը, իսկ աւ՝
 ձայնաւորից առաջ զարձել էր av, բաղա-
 ձայնից առաջ բաց օ: Ծարբեր օ-երի համար
 հարկաւոր էին տարբեր նշաններ. առաջինը
 մնաց ո, երկրորդն էլ կարող էր ի հարկէ մնալ
 աւ, եթէ սակայն այս աւ-ը ձայնաւորից
 առաջ տարբեր և բաղաձայնից առաջ տար-
 բեր հնչիւմ չունենար: Մի ժամանակ մտա-
 ծեցին այս երկուսը տարբերելու համար
 առաջին զէպքում ւ-ի վրայ գնել թաւ նշան
 Վ (աւ՝), իսկ երկրորդ զէպքում գնել օ
 կամ ուրիշ մի նշան. բայց որովհետեւ այս
 նշանները աւելի երկար էին, ուստի վճռե-
 ցին, շատ իրաւացի կերպով, առաջինը պա-
 հել անփոփոխ աւ, երկրորդի համար փոխ
 առնել յւ. օ տառը: Ֆրանսիացիք էլ այսօր
 մեր այն ժամանակուայ կիրիկեան հայոց
 պէս ունին երկու տեսակ օ, որ զրում են
 օ և աւ ձևով. բայց կարիք չեն զգում փո-
 խելու ևս գրչութիւնը, որովհետեւ աւ ունի
 միայն օ հնչիւնը և երբէք չի հնչւում av:

Ճ տառի համար առանձին ասելու բան
 չկայ. այդ հնչիւնը չկար հին հայոց ձայնա-
 կան գրութեան մէջ. երբ նրանք լսում էին
 օտար ազգերից ձ ձայնը, իրենց արտասա-
 նում և հետեւաբար գրում էին փ, ճիշտ
 ինչպէս արդի Ղարաբաղցիք կամ Մարա-
 ղայի հայերը, որոնք շարունակում են դեռ
 թուրքերէն կամ ռուսերէն Ֆասս, Ֆաբրիկ,
 Ֆայսոն ևն բառերը հնչել փաս, փարբիկ,
 փայտոն ևն: Ժամանակ անցնելով հայերէ-
 նի մէջ մտաւ նաեւ այս ձայնը, այնպէս որ
 այլևս կարիք էր զգացուած նրա համար էլ
 մի նոր նշան նարբելու և ահա ժի դարում
 փոխ առնուց յունարէնից ձ տառը: Աւե-
 լացնենք միայն այն՝ որ պէտք չէ կարծել
 թէ այդ տառը կամ հնչիւնը միմիայն օտար
 բառերի համար էր. բուն հայերէն բառերն
 էլ, թէև հազուադէպ, ունին նոյն հնչիւ-
 նը. օրինակ ինչձի՛ յմի՛նչ և ք:

Կիրիկեան հայերէնի ձայնախօսութիւնը
 կամ ձայնական գրութիւնը ընդհանուր գծե-
 ըով նկարագրելուց յետոյ, անցնինք զիտեւ
 համառօտ կերպով նրա ձայնաբանութիւնը,
 այսինքն այն ձայնական փոփոխութիւն-
 ները, որ կիրիկեան հայերէնը մուծել էր
 հին հայերէն բառերի հնչման մէջ:

Ա և Ե ձայնաւորները երեք և աւելի
 վանկով բառերի մէջ կորչում են. ինչպէս
 գանկտփոր (գանգատաւոր), պատճենի (պատ-
 ճառներ), հաւսար (հաւասար), վաճակներ
 (վաճառականներ), վայէ (վայելէ), լինեալ
 (լինեալ), ուննալ (ունենալ) ևն:

Այ դառնումի՛ է ա. ինչ. հար, մար, ձան.
 յա բառակազմում դառնում է յն. ինչ.
 յեմեմ (յամեմ), յերակ (յարակ, յարակայ),
 յիմեցնի (որ է յեմեցնել, հինը յամեցու-
 ցանել):

Ե ձայնաւորը վերածուել էր բառակազմ-
 րին միավանկ բառերի մէջ ye, բազմավանկ
 բառերի մէջ e, շեշտի տակ je, ուրիշ տեղ
 e. ինչ. ես, եմ, աներ, երկու, ընկեր,
 մեռնիմ — yes, yem, anier, ergu, օngier,
 mernim, ևն:

Նայերի մօտ Ե վերածում էր ի. ինչ.
 իրեք (երեք), աւիրեմ (աւելեմ), աւիրեմ
 (աւերեմ): — Ղ ձայնի մօտ բառակազմում
 դառնում էր ա. ինչ. աղբայր (եղբայր),
 աղիճ (եղիճ), աղտիր (եղտիր), աղշոյր
 (եղշիր):

Նախորդին հակառակ ի ձայնաւորը նա-
 յերի մօտ դառնում էր ic. ինչ. պեղծ
 (պիղծ), անկիրչոռ (անկչիւռ):

Ք ձայնաւորի տեղ յաճախ գտնում ենք
 ի. ինչ. յիտասկ (յստակ), զիտար (զիտար),
 կիրչոք (կչիւռ), իսպիտակ (սպիտակ):

Ո ձայնաւորը միավանկ բառերի սկզբում
 դառնում է vo, բազմավանկների սկզբում,
 բառամիջում և բառավերջում օ, ինչ. ով
 (վով), ոք (վր), որք (վորք), բայց յգ-
 օրպիք:

Ու ձայնաւորը բառակազմում Ղ — ից
 առաջ գտնում է ը կամ օ. ինչ. ըղորդ,
 օղորդ (ուզղորդ), ըղուզ (ուզիւռ), ըղեր-
 ձիւ, օղերձի (ուզերձիւ), ըղեւորի (ու-
 ղեւորի), օղիւմ (ուզիւմ):

Ս իրկաբարբառը գտնում է ու. ինչ.
 լուս (լոյս), քուր (քոյր) ևն:

Իւ երկբարբառը գտնում է ոյ, որ
 հնչւում էր օ ինչ. այրոյն (արիւն), հարոյր

(հարիւր), այլոյր (ալիւր), ուռոյծ (առիւծ), ալբոյր (աղբուր), հոյս (հիւսն), հոյր (հիւր), ձոյն (ձիւն) են: — Նոյն երկարաբառը զից առաջ գառնում է և կամ ի. ինչ. դեղ (զիւղ), երկեղ կամ երկիղ (երկիւղ):

Իս երկարաբառը կրճատուելով գառնում է ն. ինչ. յամսենն (յամսեանն), յաւիտեն (յաւիտեան), բորեն (բորեան), արենն (արեանն), սե (սես) են:

Բաղաձայնների մասին արգէն տեսել ենք. աւելացնենք այստեղ որ ւից յետոյ թրթռուն պայթուցիկ բաղաձայնները գառնում են թաւ. ինչ. եփ (եբբ), զերթ (զերբ), զիտրգ, կարք (կարգ), որց (ործ), վարց (վարծ):

Այս ձայնափոխութիւններից ոմանք բառի պատկերի մէջ մեծ փոփոխութիւն չեն մտցնում, բայց կան բառեր, որոնք գրաբարի համեմատութեամբ գրիթէ անճանաչելի են դարձած. ինչ. չաք-չափ, հաւէրք-հրաւէր, համար-հրաման, ճանապարհ - ճանապարհ, սուր-սուրբ, սպիկի (մաքուր, սուրբ); այնեմառնեմ, անեմ, աղջկին-աղջիկ, պոման-պայման, վոթել-վայթել, վանց-վան, պացխուն-պատասխան. արդի աշխարհաբարի կամ բարբառների հետ նոյն ձևեր են՝ արցունք, ծանկր, մանտր, ծուներ, պանդուտի են:

Կիրիկեան հայերէնը ունի նաև բոլորովին նոր բառեր, որոնք չկան գրաբարի մէջ. ինչ. սկոսայ, աղէկ, գահ, հայնց, կտրիճ, ճորտ, ճիճն (միշտ), փնտուել, խէչ (կողքին), հոնովրել «ինչքը բռնագրաւել և արգելքի տակ դնել», ըսովկիւ «սահմանափակուել, գոհանալ» են:

Քերականութիւն

Եօթը տեսակ հոլովում կայ, որոնք սեռականի կազմութեան համեմատ կոչում ենք ի, ոյ, ու, ալ, ոջ, ան և օր հոլովում: Տալիս ենք այստեղ մի քանի օրինակ այս բոլորից.

1. Պղինձ, պղնձի, ի պղնձէ, պղնձով արոյն, արոյնի կամ արեն, յարոյնէ, արոյնով. ձոյն, ձոյնի են
2. Անսուն, անսոյ, ի յանսոյ, անսով
3. Վաճական, վաճակնու, ի վաճակնէ, վաճակնով
4. Ֆուլան, Ֆուլանայ
5. Քուր, քուրով, ի քուրովէ, քուրովով

6. ութիւն, ութեան (ութեն), ի... ութենէ, ութենով կնիկ, կնկան, ի կնկնէ, կնկով ձուկ, ձկան, ի ձկնէ, ձկով.

7. աղբայր, աղբուր, յաղբաւրէ, աղբաւրով հայր, հաւր, ի հաւրէ-քոյր, քաւր են Բացատիկ հոլովում է ներկայացնում Որ, աւուր, յօրէ, յօրվնէ, օրով.

Այս բոլորի մէջ ամենահտաքորքահանն է զործիականի օմ վերջաւորութիւնը, որ գտնում ենք Յրջ հոլովման և ուրիշ շատ բառերի մէջ. ինչ. ձկով, սուպով, սխուով, առջասպով, եղկզով, պտղով, անձով, կաթով, մատով, ձեռով, ոտով, են:

Յոգնակիրի կազմութիւնը

Հին հայերէնի ք վերջաւորութիւնը կիրիկեան հայերէնում թէև գոյութիւն ունէր, բայց սահմանափակուած էր միայն ձայնաւորով յանգող բառերի համար. այսպէս որ-զիք, տանեցիք, քրիտանէք, պախրէք, վկայք, տակաւք, ածուք են:

Բացի սրանից կիրիկեան հայերէնը իբր յոգնակիրտ գործածում էր վեց ուրիշ մասնիկներ, որոնք գրաբարի մէջ հաւաքական կազմելու համար էին գործածուում: Արանք են՝

1. Եր (կարգա յեր). → այս մասնիկը գործածուում էր միայն բաղաձայնով յանգող բառերի ծայրին. և թէ միավանկ և թէ բազմավանկ բառերի համար. ինչ. որբեր, մուսնեակեր, հիւանդանոցեր, հաւուկթեր (ձուկեր), աչքվութեներ (աչքի ցաւեր): Ապագայում այս մասնիկը պիտի ընդհանրանար թէ ձայնաւորով և թէ բաղաձայնով վերջացող բառերի համար. բայց միավանկների համար պիտի մնար Եր, իսկ բազմավանկների համար պիտի դառնար Եր:

2. Յի. — այս մասնիկը գործածուում է միայն երկավանկ բառերի համար. ինչ. ամենի (ամանների), արոյնի (արիւնների), իրիցնի (երէցների), ճամփնի (ճանապարհների), պոմընի (պայմանների): Այս մասնիկն է որ ապագային միասնով եր մասնիկի հետ պիտի կազմէր արդի աշխարհաբարի ԵԵր մասնիկը:

3. Վի, ուի, լի. — այս մասնիկը շատ սահմանափակ գործածութիւն ունի. եղած օրինակները հետևեալներն են. աչվի, ձեռ-

վի, սուվի, միջուի, դուվի, իրվի, մուվի, տնվի, շնվի. — ուրիշ օրինակ չկայ: Քննու-
թյունները ցույց են տալիս որ այս մասնիկը
հայերէնի հնագոյն երկակիլի մասնիկն է և
ըստ այսմ վերի օրինակներն էլ նախկին եր-
կակիներն են. այսպէս աչք, ձեռք, ոտք,
մէջք, նմանապէս և դուռ, որ զոյգ դռներն
է նշանակում. միւսները նմանութեամբ
կազմուած ձեռք են:

4. օի. — այս մասնիկով ունինք միայն
ծակտի, այրկտի (էրկինք) և կնկտի բա-
ռերը. — այս միևնոյն մասնիկը միանալով
նախորդ վի մասնիկի հետ՝ դառնում է վօի,
որով ունինք քուրվտի (քուրեր), ճիւտ
այնպէս՝ ինչպէս ունինք ներ, որ դումարն
է նի և եր մասնիկներին:

5. ան. — այս մասնիկով են կազմուած
ծիան, իշան և ջորեան (ջորինք) բառերը.
ուրիշ օրինակ չկայ:

6. սան. — այս մասնիկը գործածուած
էր միայն ի վերջացող անշունչ առարկա-
ների համար. ինչ. շինեստան, տեղեստան,
խմելեստան, բմբելեստան, հայրենեստան: —
ի ձայնաւորով վերջացող շնչաւոր առար-
կաների յոգնակին կազմուած էր ք մասնիկով:
Այս բոլորից դուրս կային նաև ուրիշ
մասնիկներ և մասնիկների ուրիշ խառ-
նուրդներ, ինչպէս օրինակ՝ իշխանայն,
պարոնայն, գեղերայն, ծանօթի, մարդիկ,
վկայիի, պաճուի (պատճառներ) ևն:

Յոգնակիի հարվումը հետեւեալ ձևով էր
Ուղ. հայրենիք Հյց. զհայրենիք Սեռ.
և Տր. հայրենեց Բց. ի հայրենեց Գծ. հայ-
րենեօք, հայրենօք:

Գեղեր, զգեղեր, գեղերոյ, ի գեղերոյ,
գեղերով:

Տերերնի, զտերերնի, տերերնոյ, ի տերե-
նոյ, տերերնով:

Զեռվի, գձեռվի, ձեռվոյ, ի ձեռվոյ,
ձեռվով:

Քուրվտի, զքուրվտի, քուրվտոյ, ի
քուրվտոյ, քուրվտով:

Զիան, զձիան, ձիանոյ, ի ձիանոյ, ձիանով:
Տեղեստան, զտեղեստան, տեղեստնոյ,
ի տեղեստնոյ, տեղեստնով:

Միսիթար Հերացու գործածած հայերէ-
նում կայ նաև ս յանգով յոգնակի ուղ-
ղական. ինչ. ձեռս, որովայնս, հոգս, չաքս,
փխ. ձեռք, որովայնք, հոգք, չափք. սրան-
ցից, ինչպէս յայտնի է, նոգս սովորական

է այժմ արեւելեան հայերէնի մէջ, իսկ չորս՝
բոլոր բարբառներում:

Աւելացնենք վերջապէս որ կրկնեան
հայերէնում կային միևնոյն ժամանակ դուռ
գրաբարածև հարջիներ. ինչ. աղբրաց, քր-
տնոք, ի հարջնաց ևն:

Յրուական անուններ.

Գրաբարից տարբեր ձև ունին մէկ կամ
մեկ, երկու կամ երկուք, իրեք, չորս, հինկ,
իւսթն, տասնումէկ, տասնուերկու, քսա-
նուհինկ, քսասուն, իսւթնասուն, հարոյր ևն:

Գերանունները իրենց հոլովմամբ.

ես, զիս, իմ, ինձ, յիսնէ, (յիսմէ) իսնով,
(իսմով).

դու, դուն, զքեզ, քո, քեզ, ի քենէ,
ի քեզնէ, քենով, քեզնով.

մինք, զմեզ, մեր, մեզ, ի մեզնէ, մեզնով.
դուք, զձեզ, ձեր, ձեզ, ի ձեզնէ, ձեզնով.
ինք, զինք, իր, իրեն, յիրմէ, իրմով.
իրենք, զիրենք, իրենց, յիրմցնէ, յի-
րնցմէ, իրմցնով, իրնցմով.

զիրար, իրանց, յիրացմէ, իրով.
սա, զսա, սարա, —, —.

դա, զդա, դարա, —, —.
նա, զնա, նարա, —, —.

սաքա, զսաքա, սացա, իսացմէ, —.
դաքա, զդաքա, դացա, իդացմէ, —.
նաքա, զնաքա, նացա, ինացմէ, —.

այս, զայս, այսոր, յայտոր, այտով.
այտ, զայտ, այտոր, յայտոր, այտով.
այն, զայն, այնոր, յայնոր, այնով.

այտք, զայտք, այտոց, յայտոց, այտովք.
այտոք, զայտոք, այտոց, յայտոց, այ-
տովք.

այնք, զայնք, այնոց, յայնոց, այնովք.
Ըստ Միսիթար Հերացու բց. յայնորէ, յէ-
ուղ. այնոնք, զայնոնք, այնոց, յայնոցէ:

Յուցական դերանուն ևւ ածական.

իսա, իսա, ինա,
հյց. զիսա, զիտա, զինա,
Ուրիշ հոլովներ չունին:

ՊՐՈՑ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակելի) (2)